Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 19-ի N 36 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 21-ի N 1151-Ն որոշման

Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

«Արփի լիճ» ազգային պարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի հյուսիս-արևմտյան մասում, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում, բաղկացած է 5 տեղամասերից՝ արևմտյան, արևելյան, Արդենիսի, Ալվարի և Ախուրյանի կիրճ:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 21039.3 հա:

1. Արևմտյան տեղամաս - (14833.7 հա)

Տարածքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վրաստանին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արփի համայնքի Ծաղկուտ գյուղին, «Գ»-«Դ» հատվածով՝ Արփի համայնքի Գառնառիճ գյուղին, «Դ»-«Ե» հատվածով՝ Արփի համայնքի Շաղիկ գյուղին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Գառնառիճ գյուղին, հյուսիսից «Զ»-«Է» հատվածով՝ Արփիի համայնքի Ծաղկուտ գյուղին, «Է»-«Ը» հատվածով՝ Արփիի համայնքի Զորակերտ գյուղին, արևելքից «Ը»-«Թ» հատվածով՝ Արփիի համայնքի Բերդաշեն գյուղին, հարավ-արևելքից և հարավից «Թ»-«Ժ» հատվածով՝ Արփիի համայնքի Զարիշատ գյուղին, հարավ-արևմուտքից «Ժ»-«Ի» հատվածով՝ Արփիի համայնքի Շաղիկ գյուղին, արևմուտքից «Ի»-«Լ» հատվածով՝ Արփիի համայնքի Գառնառիճ գյուղին, հյուսիս-արևմուտքից «Լ»-«Ա» հատվածով՝ Արփիի համայնքի Ծաղկուտ գյուղին:

1) Արևմտյան տեղամաս – պետական սահման

սահմանագիծը՝ «Ա»-«Բ»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ծաղկուտ գյուղի և պետական սահմանի (Վրաստանի հետ) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից (x=555752.9555, y=372904.4726) մինչև «Բ» հանգուցային սահմանակետը (x=555932.0801, y=384530.2203) սահմանագիծը համընկնում է պետական սահմանի հետ:

2) Արևմտյան տեղամաս -Ծաղկուտ

սահմանագիծը՝ «Բ»-«Գ»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ծաղկուտ գյուղի և պետական սահմանի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից (x=555932.0801, y=384530.2203) սահմանագիծը թեք լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 2719 մ, հատելով ձորեր, ձորակներ՝ հասնում թիվ 10 սահմանակետին (x=553876.9417, y=383318.9125), որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և արևմուտք, թիվ 11-24 սահմանակետերով անցնում 1542 մ, հատելով ձորեր, ձորակներ և առուներ՝ հասնում թիվ 25 սահմանակետին (x=554506.8130, y=382379.4924): Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հարավ, ապա արևմուտք, թիվ 26-32 սահմանակետերով անցնում 627 մ, հատելով ձորը՝ հասնում թիվ 33 սահմանակետին (x=554351.9873, y=381927.9912), այնուհետև լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 34-38 սահմանակետերով անցնում 1683 մ, հատելով դաշտային ճանապարհը՝ հասնում թիվ 39 սահմանակետին (x=554181.0167, y=380393.6055): Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հյուսիս, ապա արևմուտք և հարավ, շրջանցելով 40-41 սահմանակետերը՝ անցնում 893 մ, հատելով դաշտային ճանապարհը՝ հասնում թիվ 42 սահմանակետին (x=554201.3336, y=380167.9544), որտեղից լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, հարավ-արևմուտք և կրկին հարավ-արևելք, թիվ 43-46 սահմանակետերով անցնում 751 մ, հասնում թիվ 47 սահմանակետին (x=553676.6415, y=380386.8051): Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 48 սահմանակետով անցնում 238 մ, հասնում ձորի եզրին գտնվող Արևմտյան տեղամասի, Արփի համայնքի Ծաղկուտ և Գառնառիճ գյուղերի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին (x=553499.2302, y=380245.8063):

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8452 մ է:

3) Արևմտյան տեղամաս - Գառնառիճ

սահմանիգիծը՝ «Գ»-«Դ»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ծաղկուտի և Գառնառիճի գյուղերի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1662 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին (x=552509.0400, y=378933. 5000), որտեղից թեքվում է դեպի հյուսիս, ապա արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 272 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին (x=552612.2268, y=378803.7911), այնուհետև հարթավայրի եզրով, ապա լանջով թեքվում է դեպի հարավ, թիվ 5-10 սահմանակետերով անցնում 2303 մ, հատելով գետը՝ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին (x=550741.3424, y=377850.5949): Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12-21 սահմանակետերով անցնում 1909 մ, հատելով դաշտային ճանապարհներ՝ հասնում թիվ 22 սահմանակետին (x=549969.8593, y=376434.8818), որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ-արևելք, թիվ 23-26 սահմանակետերով անցնում 1787 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 27 սահմանակետին (x=548454.6101, y=376488.3815), այնուհետև գետի ուղղությամբ թեքվում է արևելք, թիվ 28-33 սահմանակետերով անցնում 1244 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 34 սահմանակետին (x=548339.6203, y=377679.7408): Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 892 մ, հասնում գետի վտակի ափին գտնվող թիվ 35 սահմանակետին, որտեղից գետի վտակով, թիվ 36 սահմանակետով անցնում 557 մ, հասնում Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Գառնառիճ և Շաղիկ գյուղերի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին (x=547430.1000, y=378442.8000):

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10625 մ է:

4) Արևմտյան տեղամաս - Շաղիկ

սահմանագիծը՝ «Դ»-«Ե»

Արևմտյան տեղամասի Արփիի համայնքի Գառնառիճ և Շաղիկ գյուղերի տարածքների բաժանման «Դ» (x=547430.1000, y=378442.8000), հանգուցային սահմանակետերից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, այնուհետև արևելք՝ հատում ձորը, նորից իջնում հարավ, հետո արևելք, անցնում թիվ 1-4 սահմանակետերով 1137,18 մ՝ հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից (x=546822.2003, y=378994.5208) սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, իջնում

ձորը, ձորի ուղղությամբ կտրուկ թեքվում է հարավ-արևմուտք և արևմուտք, անցնում թիվ 6-8 սահմանակետերով 1154,15 մ է՝ հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը (x=546468.2901, y=378793.6115) իջնում է հարավ, այնուհետև արևելք, հատելով ճանապարհներ և ձորեր անցնելով թիվ 10-13 սահմանակետերով 2527,76 մ՝ հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, այնուհետև հարավ-արևելք՝ հատելով ձորը, անցնելով թիվ 15-18 սահմանակետերով 1246,9 մ՝ հասնում է թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը (x=545261.9786, y=381151.5499) թեքվում է դեպի հյուսիս-արևելք, արևելք, հյուսիս-արևմուտք, այնուհետև արևելք՝ լանջերով հատելով ճանապարհը, անցնելով թիվ 20-23 սահմանակետերով 2201,67 մ՝ հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, հյուսիս-արևելք, այնուհետև հարավ-արևելք և արևելք՝ լանջերով անցնում թիվ 25-28 սահմանակետերով 974,14 մ՝ հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը (x=545523.5314, y=383125.5526) թեքվում է դեպի հյուսիս, հյուսիս-արևմուտք, կորագծով իջնում հարավ-արևմուտք, հյուսիս-արևմուտք՝ անցնելով թիվ 30-32 սահմանակետերով 2058,18 մ՝ հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, այնուհետև հյուսիս-արևմուտք՝ անցնելով թիվ 34-36 սահմանակետերով 1021,34 մ՝ հասնում ձորի եզրին գտնվող թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը (x=547255.2565, y=381702.3099) թեքվում է դեպի հյուսիս-արևելք՝ հատելով ճանապարհներ՝ անցնելով թիվ 38-39 սահմանակետերով 679,25 մ՝ հասնում ձորի եզրին գտնվող «Ե» հանգուցային սահմանակետին (x=547598.6609, y=382286.4974):

«Դ» «Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13000,56 մ է:

5) Արևմտյան տեղամաս - Գառնառիճ

սահմանագիծը՝ «Ե»-«Զ»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Շաղիկ և Գառնառիճ գյուղերի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լճի ափով թեքվում է դեպի արևելք, արևմուտք և հյուսիս, թիվ 1-11 սահմանակետերով անցնում 2536 մ, հատելով գետը՝ հասնում լճի ուրվագծի մոտ գտնվող թիվ 12 սահմանակետին (x=549373.7097, y=382486.0143), որտեղից լճի ուրվագծին զուգահեռ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա շրջանցելով դեպի հյուսիս-արևելք՝ թիվ 13-29 սահմանակե-

տերով անցնում 1622 մ, հասնում թիվ 30 սահմանակետին (x=550095.7674, y=383153.8774), այնուհետև սահմանագիծը լճի ափով, ուրվագծին զուգահեռ թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 31-45 սահմանակետերով անցնում 1505 մ, հատելով գետը՝ հասնում Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Գառնառիճ և Ծաղկուտ գյուղերի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին (x= 550805.7200, y= 383881.6206):

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5663 մ է:

6) Արևմտյան տեղամաս - Ծաղկուտ

սահմանագիծը՝ «Զ»-«Է»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Գառնառիճ և Ծաղկուտ գյուղերի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լճի ափով, ուրվագծին զուգահեռ, թեքվում է դեպի արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 438 մ, հասնում ուրվագծի մոտ գտնվող թիվ 4 սահմանակետին (x=550836.5934, y=384307.2069), որտեղից լճի ուրվագծով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 5-10 սահմանակետերով անցնում 1388 մ, հասնում լճի ափին գտնվող թիվ 11 սահմանակետին, որտեղից ափով թեքվում է դեպի հյուսիս, արևելք և հարավ-արևելք, թիվ 12-14 սահմանակետերով անցնում 1727 մ, հասնում թիվ 15 սահմանակետին (x=551962.9996, y=386188.4110): Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի լիճ, թիվ 16 սահմանակետով անցնում 157 մ, հասնում ուրվագծի մոտ գտնվող թիվ 17 սահմանակետին (x=551827.0396, y=386162.1397), որտեղից ուրվագծով թեքվում է հարավ-արևելք, անցնում 254 մ, հասնում Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ծաղկուտ և Զորակերտ գյուղերի տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին (x=551675.9200, y=386366.5127):

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3964 մ է:

7) Արևմտյան տեղամաս - Զորակերտ

սահմանագիծը՝ «Է»-«Ը»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ծաղկուտ և Զորակերտ գյուղերի տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանգիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա լճի ափով դեպի հարավ-արևելք, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 1560 մ, հասնում ուրվագծի մոտ գտնվող թիվ 10 սահմանակետին

(x=550723.4553, y=387197.6259), որտեղից ուրվագծին զուգահեռ թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա շրջանցում դեպի հարավ-արևելք, թիվ 11-26 սահմանակետերով անցնում 2374 մ, հասնում լճի ափին գտնվող թիվ 27 սահմանակետին (x=549182.7495, y=386703.1944): Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը լճի ափով թեքվում է դեպի հյուսիս, շրջանցում դեպի արևելք և հարավ, թիվ 28-30 սահմանակետերով անցնում 1032 մ, հասնում Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ջորակերտ և Բերդաշեն գյուղերի տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին (x=549172.6194, y=387060.2814):

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4966 մ է:

8) Արևմտյան տեղամաս - Բերդաշեն

սահմանագիծը՝ «Ը»-«Թ»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ջորակերտ և Բերդաշեն գյուղերի տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը, հատելով գետը, լճի ուրվագծին զուգահեռ թեքվում է դեպի հարավ, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 1240 մ, հասնում լճի ափին գտնվող թիվ 10 սահմանակետին (x=548130.8057, y=386700.2226), որտեղից թեքվում է դեպի արևելք, թիվ 11-19 սահմանակետերով անցնում 893 մ, հասնում թիվ 20 սահմանակետին (x=548198.9460, y=387272.5435): Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը բարձունքների ստորոտներով, հարթավայրի սահմանով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա շրջանցելով դեպի հարավ-արևմուտք՝ թիվ 21-47 սահմանակետերով անցնում 3418 մ, հասնում թիվ 48 սահմանակետին (x=545434.0856, y=387862.5749): Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 49-58 սահմանակետերով անցնում 2080 մ, հասնում թիվ 59 սահմանակետին (x=546030.2269, y=386200.7153), որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք և արևմուտք, թիվ 60-63 սահմանակետերով անցնում 2571 մ, հասնում թիվ 64 սահմանակետին (x=544645.3549, y=385722.1877), այնուհետև սահմանագիծը հարթավայրի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 521 մ, հասնում Արևմտյան տեղամասի, Արփի համայնքի Բերդաշեն և Ջարիշատ գյուղերի տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին (x=544308.9202, y=385324.4588):

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10723 մ է:

9) Արևմտյան տեղամաս - Ջարիշատ

սահմանագիծը՝ «Թ»-«Ժ»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Բերդաշեն և Զարիշատ գյուղերի տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը հարթավայրի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 1646 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին (x=543685.9054, y=383999.8509), որտեղից առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 546 մ, հասնում թիվ 12 սահմանակետին (x=543462.0504, y=384497.6120), այնուհետև սահմանագիծը հարթավայրի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 13-21 սահմանակետերով անցնում 2653 մ, հասնում թիվ 22 սահմանակետին (x=541219.9106, y=383492.5180): Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը հարթավայրով թեքվում է դեպի արևելք, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 1518 մ, հասնում գետակի ափին գտնվող թիվ 25 սահմանակետին (x=541268.5680, y=384982.0129), որտեղից գետակով թեքվում է դեպի հարավ, թիվ 26-48 սահմանակետերով անցնում 1692 մ, հասնում թիվ 49 սահմանակետին (x=539831.3033, y=384685.1840), այնուհետև սահմանագիծը, հատելով ձորը՝ թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 50 սահմանակետով անցնում 2012 մ, հասնում թիվ 51 սահմանակետին (x=538432.6188 y=386109.9877), ապա թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 52-54 սահմանակետերով անցնում 677 մ, հասնում թիվ 55 սահմանակետին (x=537936.0881, y=385657.7528): Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը դաշտերով, ապա թեք լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 56-63 սահմանակետերով անցնում 5254 մ, հատելով գետը և առուները՝ հասնում թիվ 64 սահմանակետին (x=541113.2718 y=381572.8111), որտեղից լանջերով, բարձունքներով թեքվում է կրկին դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 65-71 սահմանակետերով անցնում 4599 մ, հատելով առուն՝ հասնում ձորի եզրին գտնվող Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Զարիշատ և Շաղիկ գյուղերի տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետին (x=543039.9214, y=377684.3503):

«Թ»-«Ժ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20597 մ է:

10) Արևմտյան տեղամաս - Շաղիկ

սահմանագիծը՝ «Ժ»-«Ի»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Զարիշատ և Շաղիկ գյուղերի տարածքների բաժանման «Ժ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 4787 մ, հատելով ձորը, առուները և դաշտային ճանապարհները՝ հասնում թիվ 5 սահմանակետին (x=544635.5790 y=373406.6610), այնուհետև լանջերով թեքվում է դեպի հյուսիս և հյուսիս-արևելք, թիվ 6-7

սահմանակետերով անցնում 2714 մ, հատելով առուները՝ հասնում գետի ափին գտնվող Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Շաղիկ և Գառնառիճ գյուղերի տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետին (x=547144.8634, y=372506.7904):

«Ժ»-«Ի» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7501 մ է:

11) Արևմտյան տեղամաս - Գառնառիճ

սահմանագիծը՝ «Ի»-«Լ»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Շաղիկ և Գառնառիճ գյուղերի տարածքների բաժանման «Ի» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 4008 մ, հատելով գետը, դաշտային ճանապարհները և առուները՝ հասնում թիվ 6 սահմանակետին (x=550703.6924, y=371531.6961), որտեղից թեք լանջերով, բարձունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և հյուսիս, թիվ 7-15 սահմանակետերով անցնում 4030 մ, հատելով առուներ՝ հասնում առվի եզրին գտնվող Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Գառնառիճ և Ծաղկուտ գյուղերի տարածքների բաժանման «Լ» հանգուցային սահմանակետին (x=554161.7539, y=371567.2027):

«Ի»-«Լ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8038 մ է:

12) Արևմտյան տեղամաս - Ծաղկուտ

սահմանագիծը՝ «Լ»-«Ա»

Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Գառնառիճ և Ծաղկուտ գյուղերի տարածքների բաժանման «Լ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 2420 մ, հատելով դաշտային ճանապարհները՝ հասնում Արևմտյան տեղամասի, Արփիի համայնքի Ծաղկուտ գյուղի և պետական սահմանի (Վրաստանի հետ) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին (x=555752.9555, y=372904.4726):

«Լ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2420 մ է:

2. Արևելյան տեղամաս – (5399.2 հա)

Տարածքն արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պաղաղբյուրի համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ նույն մարզի Դաշտադեմի համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ նույն մարզի Մեղվահովտի համայնքին, հարավ-արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքին, հարավ-արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Աշոցքի համայնքի Մեծ Սեպասար գյուղին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Աշոցքի համայնքի Ղազանչի գյուղին, «Է»-«Ը» հատվածով՝ Աշոցքի համայնքի Սիզավետ գյուղին, հյուսիս-արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Աշոցքի համայնքի Սարագյուղ գյուղին, հյուսիսից և հյուսիս-արևելքից «Թ»-«Ա» հատվածով՝ Վրաստանին:

1) Արևելյան տեղամաս - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պաղաղբյուր սահմանագիծը՝ «Ա»-«Բ»

Արևելյան տեղամասի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պաղաղբյուրի համայնքի և պետական սահմանի (Վրաստանի հետ) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից (x=559595.0323, y=412340.3169) սահմանագիծը լեռնաշղթայի բարձունքներով, ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 2850 մ, հասնում Արևելյան տեղամասի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պաղաղբյուրի և Դաշտադեմի համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին (x=556916.7676, y=412368.3218):

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2850 մ է:

2) Արևելյան տեղամաս - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դաշտադեմ սահմանագիծը՝ «Բ»-«Գ»

Արևելյան տեղամասի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պաղաղբյուրի և Դաշտադեմի համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լեռնաշղթայի բարձունքներով, ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 2616 մ, հասնում Արևելյան տեղամասի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դաշտադեմի և Մեղվահովտի համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին (x=554747.5193, y=412215.2617):

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2616 մ է:

3) Արևելյան տեղամաս - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեղվահովիտ

սահմանագիծը՝ «Գ»-«Դ»

Արևելյան տեղամասի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դաշտադեմի և Մեղվահովտի համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք և հարավ-արևմուտք, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 1990 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 7 սահմանակետին (x= 552975.7624, y=412267.3608), որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 62 մ, հասնում թիվ 8 սահմանակետին (x=552914.8228, y=412255.7536): Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 9-12 սահմանակետերով անցնում 3039 մ, հասնում լեռան գագաթին գտնվող Արևելյան տեղամասի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեղվահովտի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին (x=550548.2472, y=413091.0751):

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5091 մ է:

4) Արևելյան տեղամաս – Աշոցք

սահմանագիծը՝ «Դ»-«Ե»

Արևելյան տեղամասի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեղվահովտի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 2458 մ, հասնում ջրհավաքի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին (x=548284.6985, y=412758.2663), այնուհետև ջրհավաքով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 1380 մ, հասնում թիվ 5 սահմանակետին (x=549590.9922, y=412390.2001), որտեղից լանջերով թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 993 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 7 սահմանկետին (x=549274.8267, y=411560.8335): Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը լեռնալանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2780 մ, հասնում Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Աշոցք և Մեծ Սեպասար գյուղերի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին (x=548617.4492, y=408859.2705):

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7611 մ է:

5) Արևելյան տեղամաս – Մեծ Սեպասար

սահմանագիծը՝ «Ե» -«Զ»

Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Աշոցք և Մեծ Սեպասար գյուղերի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հյուսիս, անցնում 119 մ, հասնում թիվ 1 սահմանակետին (x=548617.4492, y=408859.2705), որտեղից արոտավայրով թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 1552 մ, հասնում թիվ 4 սահմանակետին (x= 549324.3764, y=407598.5369), այնուհետև թեքվում է դեպի արևելք, անցնում 1348 մ, հասնում թիվ 5 սահմանակետին (x=549166.4609, y=408937.5901): Թիվ 5 սահմանակետից սահմանագիծն արոտավայրով թեքվում է դեպի հյուսիս, ապա արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 1644 մ, հասնում թիվ 7 սահմանակետին (x=549705.6269, y=408100.6208), որտեղից կրկին արոտավայրով թեքվում դեպի հյուսիս-արևմուտք, ապա հյուսիս-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 561 մ, հասնում Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Մեծ Սեպասար և Ղազանչի գյուղերի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին (x=550096.8633, y=408261.7218):

«Ե» -«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5224 մ է:

6) Արևելյան տեղամաս – Ղազանչի

սահմանագիծը՝ «Զ» -«Է»

Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Մեծ Սեպասար և Ղազանչի գյուղերի տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 2346 մ, հատելով առուներ, ձորակներ և դաշտային ճանապարհներ՝ հասնում Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Ղազանչի և Սիզավետ գյուղերի տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին (x=552143.6268, y=407278.1276):

«Զ» -«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2346 մ է:

7) Արևելյան տեղամաս – Սիզավետ

սահմանագիծը՝ «Է» -«Ը»

Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Ղազանչի և Սիզավետ գյուղերի տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը գյուղ. հողերի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս, անցնում 4770 մ, հատելով առուներ, ձորեր, ձո-

բակներ և դաշտային ճանապարհներ՝ հասնում Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Սիզավետ և Սարագյուղ գյուղերի տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին (x=556901.1000, y=406933.5000):

«Է» -«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4770 մ է:

8) Արևելյան տեղամաս – Սարագյուղ

սահմանագիծը՝ «Ը» -«Թ»

Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Սիզավետ և Սարագյուղ գյուղերի տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը համայնքային հողերի եզրագծով, լանջով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1940 մ, հասնում թիվ 5 սահմանակետին (x=557260.5600, y=408777.5000), որտեղից արոտավայրով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 1864 մ, հատելով ձորը՝ հասնում թիվ 8 սահմանակետին (x=559035.3030, y=408861.6028), կրկին արոտավայրով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 9 սահմանակետով անցնում 1593 մ, հասնում թիվ 10 սահմանակետին (x=559037.4161, y=407506.2549), այնուհետև արոտավայրով թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևելք, թիվ 11 սահմանակետով անցնում 1007 մ, հասնում Արևելյան տեղամասի, Աշոցքի համայնքի Սարագյուղ գյուղի և պետական սահմանի (Վրաստանի հետ) տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին (x=559790.9860, y=407972.9580):

«Ը» -«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6404 մ է:

9) Արևելյան տեղամաս – Պետական սահման

սահմանագիծը՝ «Թ» -«Ա»

Արևելյան տեղամասի, Աշոցք համայնքի Սարագյուղ գյուղի և պետական սահմանի (Վրաստանի հետ) տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից մինչև «Ա» հանգուցային սահմանակետը սահմանագիծը համընկնում է պետական սահմանի հետ:

3. Ալվարի տեղամաս – (514.8 հա)

Ալվարի տեղամասը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Արփիի համայնքի Արդենիս գյուղին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արփի համայնքի Աղվորիկ գյուղին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Արփիի համայնքի Ալվար գյուղին, հարավից, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Արփիի համայնքի Բերդաշեն գյուղին:

1) Ալվարի տեղամաս – Արդենիս

սահմանագիծը՝ «Ա» -«Բ»

Ալվարի տեղամասի, Արփիի համայնքի Արդենիս և Բերդաշեն գյուղերի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից (x=547931.6671, y=390758.0584) սահմանագիծը գյուղ. հողատեսքերով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-30 սահմանակետերով անցնում 5248 մ, հասնում Ալվարի տեղամասի, Արփիի համայնքի Արդենիս և Աղվորիկ գյուղերի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին (x=547706.9196, y=394202.1085):

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5248 մ է:

2) Ալվարի տեղամաս – Աղվորիկ

սահմանագիծը՝ «Բ» -«Գ»

Ալվարի տեղամասի, Արփիի համայնքի Արդենիս և Աղվորիկ գյուղերի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծն առվի ոլորաններով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 1266 մ, հասնում Ալվարի տեղամասի, Արփիի համայնքի Աղվորիկ և Ալվար գյուղերի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին (x=547228.6615, y=394809.2328):

«Բ» -«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1266 մ է:

3) Ալվարի տեղամաս – Ալվար

սահմանագիծը՝ «Գ» -«Դ»

Ալվարի տեղամասի, Արփիի համայնքի Աղվորիկ և Ալվար գյուղերի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը հարթավայրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 395 մ, հասնում թիվ 4 սահմանակետին (x=547291.4638, y=394546.3236): Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը հարավային խոնավ տարածքներով թեքվում է

դեպի հարավ-արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 2553 մ, հասնում Ալվարի տեղամասի, Արփիի համայնքի Ալվար և Բերդաշեն գյուղերի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին (x=546697.1560, y=392064.0518):

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2948 մ է:

4) Ալվարի տեղամաս – Բերդաշեն

սահմանագիծը՝ «Դ» -«Ա»

Ալվարի տեղամասի Արփիի համայնքի Ալվար և Բերդաշեն գյուղերի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը խոնավ տարածքներով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 3761 մ, հասնում թիվ 18 սահմանակետին (x=547967.6137, y=388795.8438), որը տեղադրված է տվյալ տեղամասի հյուսիս-արևմտյան անկյունում, Ախուրյան գետից սնվող ոռոգման ցանցի վրա: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծն առվի ոլորաններով թեքվում է դեպի արևելք, թիվ 19-37 սահմանակետերով անցնում 2602 մ, հասնում Ալվարի տեղամասի, Արփիի համայնքի Արդենիս և Բերդաշեն գյուղերի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին (x=547931.6671, y=390758.0584):

«Դ» -«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6363 մ է:

4. Արդենիսի տեղամաս - (119.1 հա)

Տեղամասը բաղկացած է 2 հատվածներից:

1) Հատված - I (13.5 հա)

Արդենիսի տեղամասի I հատվածը գտնվում է Արփիի համայնքի Արդենիս գյուղի տարածքում, սկիզբ է առնում հյուսիս-արևմտյան անկյունում տեղադրված «Ա» հանգուցային սահմանակետից: Սահմանագիծը 2045 մ հորիզոնականի ուղղությամբ թեքվում է դեպի արևելք, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 422 մ, հասնում թիվ 8 սահմանակետին (x=550143.9888, y=392326.5866), որտեղից տնամերձերի եզրերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9-14 սահմանակետերով անցնում 170 մ, հասնում թիվ 15 սահմանակետին (x=550012.9560, y=392414.9005), այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16-18 սահմանակետերով անցնում 216 մ, հասնում թիվ 19 սահմանակետին (x=549848.8949, y=392292.4309): Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը կրկին 2045 մ հորիզոնականի ուղղությամբ թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-

արևմուտք և հյուսիս, թիվ 20-26 սահմանակետերով անցնում 577 մ, հասնում «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ավ-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1385 մ է:

Հատված - II (105.6 հա)

Տարածքը հյուսիսից, արևելքից և հարավից «Ա» -«Բ» հատվածով սահմանակից է Արփիի համայնքի Աղվորիկ գյուղին, հարավից, արևմուտքից և հյուսիսից «Բ» -«Ա» հատվածով՝ Արդենիսի գյուղական համայնքին:

Հատված - II - Աղվորիկ

սահմանագիծը՝ «Ա» -«Բ»

Արդենիսի տեղամասի II հատվածի, Արփիի համայնքի Աղվորիկ և Արդենիս գյուղերի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից (x=549099.1050, y=394174.5212) սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 34 մ, հասնում Արդենիս գետակի ափին գտնվող թիվ 1 սահմանակետին (x=549065.4992, y=394180.5735): Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, անցնում 180 մ, հասնում թիվ 2 սահմանակետին (x=549065.4992, y=394360.5493), որտեղից թեքվում է դեպի հարավ, հատելով գետակը՝ անցնում 310 մ, հասնում թիվ 3 սահմանակետին (x=548755.4992, y=394360.5493): Այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 4-9 սահմանակետերով անցնում 640 մ, հատելով գետակը՝ հասնում թիվ 10 սահմանակետին (x=548670.2811, y=394927.1834), որտեղից թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևելք, թիվ 11-14 սահմանակետերով անցնում 751 մ, հատելով գետակը՝ հասնում թիվ 15 սահմանակետին (x=549084.7685, y=395382.4747): Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը հատելով՝ Արդենիս գետակը թեքվում է դեպի հարավ, անցնում 752 մ, հասնում թիվ 16 սահմանակետին (x=548335.0354, y=395443.8028): Թիվ 16 սահմանակետից սահմանագիծն Արդենիս գետակի հարավային խոնավ տարածքների երկայնքով թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 17-29 սահմանակետերով անցնում 1495 մ, հասնում թիվ 30 սահմանակետին (x=548765.7832, y=394167.4833): Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, անցնում 136 մ, հասնում թիվ 31 սահմանակետին (x=548901.0002, y=394181.2410), այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 42 մ, հասնում Արդենիսի տեղամասի II հատվածի, Արփիի համայնքի Աղվորիկ և Արդենիս գյուղերի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին (x=548888.5430, y=394141.5750):

«Ա» -«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4340 մ է:

Հատված - II - Արդենիս
սահմանագիծը՝ «Բ» -«Ա»

Արդենիսի տեղամասի II հատվածի, Արփի համայնքի Աղվորիկ և Արդենիս գյուղերի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը հարթավայրով թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 1-24 սահմանակետերով անցնում 1394 մ, հասնում թիվ 25 սահմանակետին (x=549503.7966, y=393144.1929): Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, թիվ 26-35 սահմանակետերով անցնում 200 մ, հատելով գետակը՝ հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 37-68 սահմանակետերով անցնում 987 մ, հասնում թիվ 69 սահմանակետին (x=549423.0772, y=394028.2150): Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 70-78 սահմանակետերով անցնում 290 մ, հասնում թիվ 79 սահմանակետին (x=549224.8681, y=394180.9988), որտեղից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 126 մ, հատելով Արդենիս գետակը՝ հասնում Արդենիսի տեղամասի II հատվածի, Արփիի համայնքի Աղվորիկ և Արդենիս գյուղերի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Բ» -«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2997 մ է:

5. «Ախուրյանի կիրճ» տեղամաս – (172.5 հա)

«Ախուրյանի կիրճ» տեղամասը բաղկացած է 3 հատվածներից:

1) «Ախուրյանի կիրճ» - Հատված - I (19.2 հա)

Հատվածը գտնվում է Ամասիայի համայնքի Ամասիա գյուղի տարածքում, սկիզբ է առնում հյուսիս-արևմտյան անկյունում տեղադրված «Ա» հանգուցային սահմանակետից:

Սահմանագիծը լանջով թեքվում է դեպի արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 486 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին (x=541774.3583, y=397036.5197), որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, հարավ-արևմուտք և կրկին հարավ-արևելք, թիվ 4-23 սահմանակետերով անցնում 1251 մ, հասնում թիվ 24 սահմանակետին (x=540749.2991 y=397335.8383): Թիվ 24 սահմանակետից սահմանագիծն արոտով թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս, թիվ 25-47 սահմանակետերով անցնում 1120 մ, հասնում թիվ 48 սահմանակետին

(x=541190.7176, y=396962.3090): Թիվ 48 սահմանակետից սահմանագիծն անտառի եզրագծով թեքվում է դեպի արևմուտք և հյուսիս-արևելք, թիվ 49-71 սահմանակետերով անցնում 561 մ, հասնում արոտի եզրին գտնվող թիվ 72 սահմանակետին (x=541301.8105, y=396988.4027): Թիվ 72 սահմանակետից սահմանագիծն արոտով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 156 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 73 սահմանակետին (x=541449.1568, y=397039.6558): Թիվ 73 սահմանակետից սահմանագիծն անտառի եզրագծով թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 74-78 սահմանակետերով անցնում 184 մ, հասնում թիվ 79 սահմանակետին (x=541487.6419, y=396890.0259), որտեղից արոտով թեքվում է դեպի հյուսիս, անցնում 181 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 80 սահմանակետին (x=541667.4797, y=396910.1830): Թիվ 80 սահմանակետից սահմանագիծն անտառի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս և արևմուտք, թիվ 81-106 սահմանակետերով անցնում 834 մ, հասնում թիվ 107 սահմանակետին (x=541789.7736, y=396559.8705): Թիվ 107 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, արևմուտք, ապա արևելք և հյուսիս, թիվ 108-114 սահմանակետերով անցնում 203 մ, հասնում «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ա» -«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4976 մ է:

2) «Ախուրյանի կիրճ» - Հատված - II (144.5 հա)

Հատվածը գտնվում է Աշոցքի համայնքի Կրասար գյուղի տարածքում, սկիզբ է առնում հյուսիս-արևելյան անկյունում տեղադրված «Ա» հանգուցային սահմանակետից (x=545236.5665, y=402436.3569): Սահմանագիծն անտառի եզրով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 514 մ, հասնում թիվ 8 սահմանակետին (x=544748.4875, y=402486.1976), որտեղից կրկին անտառի եզրով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք, թիվ 9-79 սահմանակետերով անցնում 5866 մ, հատելով 2003.3 մ բարձունքը (թիվ 60 սահմանակետ)՝ հասնում թիվ 80 սահմանակետին (x=542999.3553, y=399213.7869): Թիվ 80 սահմանակետից սահմանագիծն անտառի և արոտի եզրերով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 81-90 սահմանակետերով անցնում 1096 մ, հատելով 2029.4 մ բարձունքը (թիվ 84 սահմանակետ)՝ հասնում թիվ 91 սահմանակետին (x=542866.3426, y=398192.5530): Թիվ 91 սահմանակետից սահմանագիծն արոտի եզրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 92-102 սահմանակետերով անցնում 1514 մ, հատելով 2047.8 մ բարձունքը (թիվ 100 սահմանակետ)՝ հասնում թիվ 103 սահմանակետին (x=541890.6238, y=397211.6959), որտեղից կրկին

արոտի եզրով թեքվում է դեպի հյուսիս, թիվ 104-106 սահմանակետերով անցնում 373 մ, հասնում թիվ 107 սահմանակետին (x=542261.6638, y=397194.3984): Թիվ 107 սահմանակետից սահմանագիծն անտառի եզրով թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևելք, թիվ 108-115 սահմանակետերով անցնում 757 մ, հասնում Ախուրյան գետի ափին գտնվող թիվ 116 սահմանակետին (x=542780.4843, y=397604.3348): Թիվ 116 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս, թիվ 117-125 սահմանակետերով անցնում 708 մ, հասնում թիվ 126 սահմանակետին (x=542261.6638, y=397194.3984):»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 19-ի N 36 -Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 21-ի N 1151-Ն որոշման

«ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ



»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17_0036

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունվարի 19-ի N 36 -Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 21-ի N 1151-Ն որոշման

«ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ
ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ



»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17_0036